
ԴԱՏԱԿԱՆ-ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

1934 թ. ԱՊՐԻԼԻ 23 — 27

Հրատարակություն ՀՍԽՀ Արդժողկոմիսի
Յ Ե Ի Ե Վ Կ Ա Ն 1934

Ս/Թ. ապրիլի 23-27-ին Մոսկվայում տեղի ունեցավ համամիութենական դատական-դատախազական աշխատողների առաջին խորհրդակցութիւնը և դատախազական աշխատողների առաջին համամիութենական խորհրդակցութիւնը: Այդ խորհրդակցութեանը մասնակցեցին վոչ միայն բոլոր դաշնակից հանրապետութիւնների արդարադատութեան ժողովրդական կոմիսարիատները, գերագույն դատարանների և հանրապետական դատախազութիւնների ղեկավարները, այլև յերկրային ու մարզային դատախազներն ու դատական-դատախազական տեղական ստորին ողակների մի շարք աշխատողները:

Այդ խորհրդակցութեան նշանակութիւնը, միանգամայն ակներև է՝ վորպես դատական-դատախազական աշխատողների համամիութենական առաջին խորհրդակցութիւն, մի կողմից և վորպես՝ արդարադատութեան մարմինների աշխատանքների բարելավման հետ սերտորեն կապված՝ խոշոր սկզբունքային և գործնական կարևորութիւն ունեցող մի շարք

ՍԵՐ. Ա. Հախվերդյան

Գլավիւր 483

Գատվեր 1262

Տիրած 500

Գեորգի Կոնստանտինովիչ, Յերեվան

հարցեր քննության առնող խորհրդակցություն՝ մյուս կողմից: Այդ խորհրդակցության վորոշումներում պատասխան գտան, այն մի շարք պահանջները, վորոնք 17-րդ կուսհամագումարի պատմական վորոշումների և մեր կուսակցության առաջնորդ ընկ. ՍՏԱ-ԼԻՆԻ ցուցումների համաձայն, ներկայումս առաջադրվում են արդարադատության մարմիններին:

Խորհրդակցությունում լսվեցին և բազմակողմանիորեն քննության առնվեցին ընկ. Ի. Ա. ԱԿՈՒԼՈՎԻ և Ա. Ն. ՎԻՆՈԿՈՒՐՈՎԻ ղեկուցումները՝ արդարադատության մարմինների խնդիրների մասին՝ կապված կուսակցության 17-րդ համագումարի վորոշումների հետ, ընկ. Ն. Վ. ԿՐԻԼԵՆԿՈՅԻ ղեկուցումը՝ դատական-դատախազական աշխատանքների վորակը բարելավելու ձեռնարկումների մասին, ընկ. Գ. Կ. ՌՈԳԻՆՍԿՈՒ ղեկուցումը՝ ոգոստոսի 7-ի Խրենդի կիրառման պրակտիկայի մասին, ընկ. Ս. ՅԱ. ՎԻՇԻՆ-ԱԿՈՒ ղեկուցումը՝ դատական-դատախազական աշխատանքների վորակը բարելավելու ձեռնարկումների մասին, ընկ. Գ. Կ. ՌՈԳԻՆՍԿՈՒ ղեկուցումը՝ ղեկավարների 8-ի Խրենդի կիրառման պրակտիկայի մասին, ընկ. Գ. Մ. ՍԵԳԱԼԻ ղեկուցումը՝ դատախազության աշխատանքում հասարակայնության մասնակցության մասին, ընկ. Ս. Ն. ԱՐԼՈՎՍԿՈՒ ղեկուցումը՝ դատա-

խազական մարմինների գործողությունները տեղերում համակարգելու (համաձայնեցնելու) մասին:

Այս բոլոր ղեկուցումների շուրջը ինչպես դատական-դատախազական աշխատողների համամիութենական առաջին խորհրդակցությունում, նույնպես և դատախազական աշխատողների խորհրդակցությունում ընդունվեցին բանաձևեր և շրջանային դատախազությունների աշխատանքները կազմակերպելու մասին շրջաբերական-նամակ, վորոնք այժմ հրատարակվում են հատուկ բրոշյուրով:

1934 թ. Հունիսի 20-ին.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԿԱՊՎԱԾ 17-ՐԴ ԿՈՒՍՉԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇԵՏ

ԸՅԿ ԸՅԿ Ի.Ա. Ակուլովի յեմ Ա.Ն. Վիսոկինովի զեկու-
ցումների առթիվ բնորոշված բանաձևվերք

1. Կապիտալիստական տարրերի վերջնա-
կան լիկվիդացիայի և անդասակարգ հասարա-
կություն ստեղծելու վերաբերյալ 17-րդ կուս.
համագումարի դրած խնդիրները՝ պահանջում
են պրոլետարիատի գլխատառուրայի մարմին-
ների ուժեղացումը: Պրոլետարական գլխա-
տառայի ամրացումը անփակելիորեն՝ կապ-
ված է սոցիալիստական իրավադիտակցու-
թյան աճման և սոցիալիստական հեղափոխա-
կան որինականության նշանակության ուժե-
ղացման հետ:

Քաղաքում և գյուղում սոցիալիզմի վերջ-
նական հաղթանակի, աշխատավորների կող-
մից պրոլետարական պետությունը առաջադե-
վող պահանջների բարձրացման, մեղ թշնամի
գազակարգերի մնացորդների և նրանց գործա-

կալների դիմադրությունն նոր ձևերի պայման-
ներում, խորհրդային որենքի ամրությունը ու
անխախտելիությունը և այդ որենքի պահակ՝
արդարադատության մարմինների ամրացումը
առանձին նշանակություն է ստանում:

Սոցիալիստական որինականության աճող
դերը ներկա ետապում իր ուղղակի արտա-
հայտությունն է գտել կուսակցության և կա-
ռավարության մի շարք դիրեկտիվների մեջ
(1932 թ. հունիսի 25-ի դիրեկտիվը, ոգոս-
տոսի 7-ի որենքը, մայիսի 8-ի դիրեկտիվը,
դեկտեմբերի 8-ի որենքը) և միութենական
դատախազություն հիմնելու խոշոր քաղաքա-
կան նշանակություն ունեցող ակտում:

2. 17-րդ կուս. համագումարի վորոշում-
ների համաձայն՝ արդարադատության մար-
մինների աշխատանքի հիմնական բովանդա-
կությունը ներկա ետապում պետք է հանդի-
սանա՝

ա) Պայքար սոցիալիստական սեփակա-
նության հափշտակությունների դեմ:

բ) Պայքար արտադրանքի վորակի համար
և հատկապես անվորակ և չկոմպլեկտավոր-
ված արտադրանք բաց թողնելու հանցավոր
յերևույթների դեմ:

գ) Պայքար խորհրդային իշխանությունն ու-
րենքների խտադույն կատարման և պետական
կարգապահության խտադույն պահպանման
համար:

դ) Պայքար աշխատանքի կարգապահության խախտումների դեմ:

յե) Պայքար բյուրոկրատիզմի և քաշքշուկի դեմ:

3. Այս խնդիրների կատարման վճռողական պայմանն է հանդիսանում դատական-դատախազական սխտեմի բոլոր ողակների վողջ աշխատանքի վորակի բարձրացումը և վերակառուցումը նրանց առաջ դրված քաղաքական խնդիրների մակարդակին համապատասխան:

4. Դատական մարմինների աշխատանքում հիմնական թերությունները համարվում են ոգոստոսի 7-ի, դեկտեմբերի 8-ի և այլ որենքների կիրառման ժամանակ թույլ տրված քաղաքական խեղաթյուրումներն ու սխալները, (մի կողմից այդ կարևորագույն որենքների քաղաքական նշանակության կոծկումը, մյուս կողմից մասսայական ռեպրեսիաներով տարվելը), նրանց կամպանիոն բնույթ տալը, դատաքննության ցածր վորակը, հետամնացությունն ու անշնորհքությունը, դոկհկացումը, պրոցեսուալ պահանջների անտեսումը, դատավճիռները կազմելու գործում քաղաքական անուշադրությունը, մեղադրանքի սխալ վորակումը, դեռ չվերացված քաշքշուկը և գործերի քննության բյուրոկրատիկական կարգը, անվճռականությունը և անվորակ նախադատարաստված գործերը նվազագույնի հասցնելու անկարողությունը, դատական աշխատանքի

եֆֆեկտիվության ստուգման բացակայությունը և այլն:

5. Անբավարար և նույնպես և դատախազական հսկողության աշխատանքը: Նրա հիմնական թերություններն են՝

ա) Միանգամայն անբավարար հսկողությունը նախաքննության վրա:

բ) Դատի տալու քաղաքականության մեջ խոչոր սխալների և խեղաթյուրումների առկայությունը և բացահայտ անուշադիր վերաբերմունքը (7-8, 8-12 որենքը), մասսայորեն պատասխանատվության յենթարկելու տրամադրություններ ցուցաբերելը և այլն):

գ) Դատական հսկողության ցածր վորակը:

դ) Դատախազությանը վոչ հատուկ՝ ամեն տեսակի ֆունկցիաներով տարվելը (հետադոտությունները, ռեյդեր անցկացնելը) ի վնաս նախաքննության և դատարանի վրա իրականացվելիք հսկողության:

յե) Միանգամայն անբավարար հսկողություն՝ ազատազկման վայրերի և դատավճիռների կատարման վրա:

զ) Դատախազական հսկողության մարմինների ոպերատիվ աշխատանքների անբավարար լինելը:

ե) Կատարման ստուգման համարյա լիակատար բացակայությունը:

6. Դատախազական հսկողության մարմինների խոչոր թերությունն է համարվում,

աշխատավորներին նյութական- կենցաղային չահերի պաշտպանության գործի վրա անբավարար ուշադրությունը, չնայած նրան, վոր կուսակցությունն այդ հարցը առաջադրել է վորպես առաջնահերթ և կարևոր խնդիր: Դատաստանության մարմինները բավարար չափով չեն պայքարում բանվորների, ծառայողների, ուսուցիչների աշխատավարձի, ինչպես նաև կոլխոզնիկների հասանելիք պարտքերը լիկվիդացիայի յենթարկելու ուղղությամբ: Չկան հրաժեշտ պայքար տեղերում, տուգանումների քաղաքականության ասպարիզում՝ տեղի ունեցող խեղաթյուրումների դեմ և այլն:

7. Դատական - դատախազական մարմինների աշխատանքներում նկատվող այս բացերը մեծ մասամբ բացատրվում են նրանց կազմակերպչական սխալ կառուցվածքով, նրանց աշխատանքում գոյություն ունեցող ֆունկցիոնալականության և դիմագրկության առկայությամբ, անհրաժեշտ օպերատիվ և կոնկրետ ղեկավարության բացակայությամբ, ղեկավարության գրասենյակային բյուրոկրատիկ մեթոդների առկայությամբ և հենց դատական-դատախազական ապարատում գոյություն ունեցող քաջքուկների դեմ տարվող պայքարի թուլություն:

8. Վերելում հիշատակված թերությունները տեղի յեն ունենում նաև քննության բնագավառում, վորը հանդիսանում է մեր սիստե-

մի ամենանեղ տեղերից մեկը: Քննություն դերը և քաղաքական նշանակությունը, հատկապես աճում է շեշտակի է՝ քաղաքականապես նախադատարանոված ուսուցիչայի պահանջի պայմաններում: Բարձր վորակով կատարված քննությունը հանդիսանում է դատական քաղաքականության ճշտության և դատարանի բարձր վորակի գրավականը:

9. Ներկա ետապում դատարանի քաղաքական-դատախարակչական դերի ուժեղացման կապակցությամբ բարդանում են ուղղիչ-աշխատանքային հիմնարկների առաջ դրված խնդիրները: Անհրաժեշտ է վերացնել ուղղիչ-աշխատանքային հիմնարկների գործունեության մեջ նկատվող այն տնտեսական-արտադրական աշխատանքները, վորոնք կատարվում են ի վնաս ուղղիչ-աշխատանքային գործունեության:

Ուղղիչ- աշխատանքային հիմնարկները սիստեմի առաջ դրված խնդիրների իրականացման գլխավոր խոչընդոտը՝ ուղղիչ-աշխատանքային հիմնարկների աշխատող կադրերի անբավարար կազմն է: Անհրաժեշտ է վերանայել ուղղիչ-աշխատանքային հիմնարկների աշխատողների ամբողջ կազմը և այն թարմացնել քաղաքականապես կայուն և վորակյալ աշխատողներով:

10. Արդարադատության մարմինների վորջ սիստեմի կադրերի խնդիրը ամենաշուրջ

պրորկեմն և հանդիսանում: Անհրաժեշտ է՝ ա) արդարադատության աշխատողների շարքերի սխառնամաղի մաքրումը վոչ պիտանի և իրենց դործին չտիրապետող աշխատողներից, բ) դատախազների, դատավորների ուղղիչ-աշխատանքային հիմնարկների աշխատողների և մանավանդ քննչական կադրերի պատրաստման և վերապատրաստման համար լայն միջոցառումների ծավալումը, գ) իրավաբանական բարձրագույն կրթական հաստատությունների ցանցի վերանայումը այն տեսանկյունով, վոչ իրավաբանական կրթությունը կենտրոնացվի ԽՍՀՄ-ի ավելի խոշոր և համապատասխան դատափական կադրերով սպահովված կենտրոններում. դ) իրավաբանական բարձրագույն կրթական հաստատությունների ստրուկտուրայի վերակառուցումը՝ բարձրագույն դպրոցների մասին՝ կենտկոմի տված ցուցումների համաձայն, յե) կադրերի, հատկապես քննիչների նյութական-կենցաղային դրուժյան հետագա բարելավումը, զ) քննչական աշխատանքների համար ավելի վորակյալ աշխատողների բնորոշվելու:

11. Կուսակցության 17-րդ համագումարի և մասնավորապես կազմակերպչական հարցերի վերաբերյալ յեղած վորոշումների հիմուն վրա, պետք է կենսագործվի դատական-դատախազական մարմինների արմատական-կազմակերպչական վերակառուցումը արտադրա-

կան-տերրիտորյալ սկզբունքով (Ֆունկցիոնալ-կայի և դիմադրկության լիկվիդացիան):

12. Ժողդատարանը, վորը բնակչությանը ավելի մոտ է կանգնած և հանդիսանում է դատական սխառնմի կարեվորագույն ողակը, պետք է միշտ դատարանի ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում գտնվի:

Ժողդատարանը՝ շրջանի տնտեսական-քաղաքական կյանքի հետ ամենորյալ կապ պահպանելու նպատակով, շրջանի ավելի կարեվոր արտադրական և քաղաքական կենտրոններում կազմակերպում է իր Փիլիալները (բաժանմունքները) այն պայմանով, վոր շրջանային կենտրոնում գտնվող ավագ դատավորների վրա դրվի պարտականություն՝ կապ պահպանելու շրջանային կազմակերպությունների հետ և ընդհանուր ղեկավարություն ցույց տալու ժողդատարաններին:

Յերկրային (մարդային) և գլխավոր դատարաններն իրենց հիմնական ուշադրությունը պետք է նվիրեն՝ ժողդատավորներին ոգնելու և ղեկավարելու, ժողդատարանների կադրերի մանրագննին և ուշադիր բնորոշյան և վորակավորման, նրանց հեղինականության բարձրացման, նրանց ոպերատիվ աշխատանքներին միջամտելու ամեն տեսակի դեպքերի դեմ պայքարելու գործին:

13. Դատախազության գծով անհրաժեշտ է՝ ա) վերջ տալ դատախազական ֆունկցիա-

ների ընդհանուր և դատական հսկողութիւնը՝ Փունկցիաների արհեստական բաժանմանը.

բ) Հրաժարվել դատախազական կամ դատական աշխատանքների հետ կապ չունեցող ամեն տեսակի հետապնդութիւններին, ուսկից երբին, արշավներին և այլն մասնակցելուց:

գ) Սահմանել այնպիսի կարգ, վոր դատախազութեան աշխատողները սիւստեմատիկ մասնակցութիւն ունենան ինչպէս առաջին, նույնպէս և վճարել առջանի դատական նիստերին.

դ) Կարգ սահմանել, վոր կայացրված յուրաքանչյուր անիրավացի դատավճռի համար պատասխանատուութիւն կրի ինչպէս դատաբանի կազմը, նույնպէս և դատավճիռը չբողոքարկող դատախազը:

Հատուկ նշանակութիւն են ստանում շրջանային դատախազների ղեկավարման և շրջանային դատախազութիւնների աշխատանքների վերահսկողութեան հարցերը՝ կապված հետեյալ խնդիրների հետ՝ ա) շրջանային դատախազներին՝ իրենց վոր հատուկ բոլոր Փունկցիաներից ազատելը. բ) դատախազների հաշվետուութիւնների կրճատումը, գ) շրջատախազներին կենդանի ղեկավարութիւն ցույց տալու գործի ուժեղացումը. դ) շրջատախազներին՝ դատախազութեան աշխատանքներին չվերաբերող բողոքներ ընդունելու և քննու-

թեան ստանելու պարտականութիւններից ազատելը:

Սորհրդակցութիւնը առանձնապէս անհրաժեշտ է համարում, վորպեսզի շրջանային դատախազների ղեկավարութիւնը կենտրոնացվի բացառապէս յերկրային (մարդային) դատախազի կամ նրա տեղակալի ձեռքում:

14. Դատական-դատախազական աշխատանքների վորակի բարձրացման և նրանց առաջ դրված խնդիրների կատարման գործում, խոշոր նշանակաւթիւն ունի, բանվորական և կոլտնտեսական լայն ակտիվի ամենորոյս մասնակցութեան ապահովումը դատական-դատախազական աշխատանքներին: Մինչև այժմ սոցհամատեղիչների, դատախազ. ուժանակող խմբակների և այլն աշխատանքները կրել են պատահական և վոր սիւստեմատիկ բնույթ, ընդ վորում բացակայել է դատական-դատախազական մարմինների կողմից՝ ակտիվի անհրաժեշտ ղեկավարութիւնը: Բանվորական և կոլտնտեսական լայն ակտիվը՝ դատախազական և դատական աշխատանքների մեջ ներդրավելիս, անհրաժեշտ է լավագոյն ակտիվիստներին առանձնացնել, պարգևատրել և առաջադրել դատական-դատախազական հաստիքային աշխատանքների համար և այլն:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրութիւն դարձնել հասարակական դատարանների վրա, վորպէս սոցիալիստական շինարարութեան

խնդիրներ չուրջը մասսաներին մօրիլիզացիա-
յի յենթարկող որդանների (գործարանների,
ֆաբրիկաների և խորհանսությունների, ար-
տադրական-ընկերական դատարանների, հա-
սարակական գյուղական դատարանների և
այլն) :


Անհրաժեշտ և ուժեղացնել դատարանների
և պրոֆսիտությունների ղեկավարությունը այդ
դատարանների վրա, կազմակերպելով այդ-
պիսիք բոլոր ձեռնարկություններում: Դնել
արտադրական-ընկերական և այլ հասարակա-
կան դատարանների մասին միութենական ո-
րենք հրատարակելու հարցը:

15. 17-րդ կուս. համագումարը հատկա-
պես ընդգծեց մի շարք կազմակերպչական
խնդիրներում, կատարման ստուգման և վերա-
հսկողության կազմակերպման կարևորություն-
ը. այնինչ կատարման ստուգման գործը դա-
տական և դատախազական մարմիններում չա-
փազանց վատ և դրված: Արդարադատության
մարմինների ստրուկտուրան և աշխատանքը
վերակառուցելիս հատուկ ուշադրություն
պետք է դարձնել կատարման ստուգման պատ-
շաճ կազմակերպման վրա:

16. Անդաատկարգ սոցիալիստական հա-
սարակության կառուցման պայքարում, խոր-
հրդային արդարադատության մարմինները
հանդիսանում են պրոլետարական դիկտատու-
րայի մարտական մարմիններից մեկը: Այդ

հանգամանքը դատարանի և դատախազության
մարմինների ստաջ պատմական նշանակու-
թյուն ունեցող բացառիկ խնդիրներ և ղեռն-
վորող լուծումը 17-րդ համագումարի դիրեկ-
տիվների և բնկ. ՍՍՍՀԻՆԻ ցուցումների հի-
ման վրա, ստավեյապես կախված է արդարա-
դատության մարմինների կատարած ճիշտ և
հստակ ուղեբառիմ աշխատանքից:

Մեր աշխատանքի բարձր վորակի դեպ-
քում միայն մենք կ'կատարենք, նոր սոցիա-
լիստական հասարակության կառուցման հա-
մար, Մարքս-Լենինի-Ստալինի դրոշի տակ
պայքարող, պրոլետարական հեղափոխության
դինմիորների պարաքը:



ՈԳՈՍՏՈՍԻ 7-Ի ՈՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՄԱՍԻՆ ԸՆԿ. Ն. Վ. ԿՐԻԼԵՆԿՈՅԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ
ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ

Լսելով ընկեր Կրիլենկոյի դեկլացումը, ոգոստոսի 7-ի որենքը և մայիսի 8-ի հրահանգը կիրառելու դատական-դատախազական պրակտիկայի մասին, դատախազական աշխատողներին համամիութենական խորհրդակցությունը արձանագրում է, Վոր չնայած ոգոստոսի 7-ի որենքը հիմնականում ճիշտ և կիրառված և մասնաշաղկապի ղեկավարության կրճատման վերաբերյալ մայիսի 8-ի հրահանգի հիման վրա դատական պրակտիկայում վորոշ հաջողություններ ձեռք են բերված, սակայն դեռ դատական-դատախազական մարմինների աշխատանքում գոյություն ունեն մի շարք երկայն թերություններ:

Այդ թերությունները ամբողջովին հետևանք են նրա, Վոր առանձին յերկրներում և մարզերում մի շարք դատական աշխատողներ չեն ըմբռնել, ինչպես ոգոստոսի 7-ի որենքի, նույնպես և կուսակցության ու կառավարության հետագա ցուցումների և մայիսի 8-ի հրահանգի կիրառման կարգը:

Ուշադրության արժանի յեն հատկապես հետևյալ խոշոր թերությունները.—

1. Շարունակվում է ոգոստոսի 7-ի որենքի, դրասենյակային բյուրոկրատական ձեվի կիրառումը, անտեսելով մայիսի 8-ի հրահանգի այն պահանջը, Վոր յուրաքանչյուր հարված պետք է լինի շեշտակի և պաշտպանություն գտնի աշխատավորական լայն դանդավածների կողմից:

2. Պատահում են դեպքեր, յերբ պատասխանատվության են յենթարկվում այնպիսի անձինք, Վորոնք սոցիալիստական սեփականության հափշտակման գործում չեն հանդիսացել գլխավոր մեղադրյալները, կազմակերպիչները կամ ղրդիչները, ընդհակառակը՝ ձիչ չեն այնպիսի դեպքերը, յերբ ոգոստոսի 7-ի որենքով պատասխանատվության են յենթարկվում մանր և աննշան գողություններ կատարող աշխատավորները:

3. Ոգոստոսի 7-ի որենքով վորակվող գործերի նախաքննության վորակը ցածր է, չնորհիվ դատախազության մարմինների անհրաժեշտ հսկողության և դեկավարության բացակայության:

4. Ոգոստոսի 7-ի որենքի կիրառումը տարածական մեկնաբանությամբ այնպիսի հանցագործությունների վերաբերմամբ, գլխավորապես պաշտոնական, Վորոնց նկատմամբ այդ որենքը կիրառվել չեր կարող (որինակ՝

առանց ծանրացնող շահագրգռական մատիվ-
ների կատարած սրաչափական հանցագործու-
թյունները:

5. Ոգոստոսի 7-ի որենքով պատժի առա-
վելագույն չափին (գնդակահարության) դա-
տապարտելու մի շարք չ'հիմնավորված և
գործի հանգամանքներից չ'բղխող դեպքերը:

Համամիութենական խորհրդակցությունը
անհրաժեշտ և համարում է:

1. Պրոցեսուալ նորմաների կիրառման
խնդրում՝ դատական սրահախիստում ստեղ-
ծել արմատական օյնալիսի բեկում, վերաբե-
զի ապահովի դատաքննության անհրաժեշտ
վորակը և պատշաճ ուշադրություն դարձի
յուրաքանչյուր գործի փաստական կողմի վրա,
լիովին վերացնելով դատական սրահախիստում վա-
րելու գոեհպացման ամեն տեսակի փորձերը:

2. Թույլ չտալ ոգոստոսի 7-ի որենքով
վորակելու մանր և աննշան գողությունների
վերաբերյալ գործերը, այդ գործերով կիրա-
ռել ՌՍՖՍՀ Քր. Որ. 169 հոդվածը և դաշնա-
կից հանրապետությունների քրեական որենա-
գրքի համապատասխան հոդվածները (ՀՍՖՍՀ
193 Վ.):

3. Թույլ չտալ ոգոստոսի 7-ի որենքի տա-
րածական մեկնաբանությունը՝ և այդ որենքի
սանկցիան չկիրառել օյնալիսի հանցագործու-
թյունների նկատմամբ, վերոնր քա իրենց
բնույթի պատկանում են քրեական որենագրի

20.

այլ հոդվածներին (սրաչափական, տնտե-
սական և այլ հանցագործություններ):

4. Ոգոստոսի 7-ի որենքով վորակվող գոր-
ծերի նախաքննությունը ղեկավարելիս, ինչ-
պես և գործը դատաքննության ուղարկելու համար,
նախաքննության նյութերը և մեղադրական
յեղրակացությունները հաստատելիս, դիտա-
վոր մեղադրյալներին (կադմակերպիժներ,
դրդողներ) հայտարարելու նպատակով, հա-
տուկ ուշադրություն դարձնել՝ քննության
լրիվ լինելուն և չսահմանափակվել միայն հան-
ցագործության յերկրորդական մասնակիցնե-
րին պատասխանատվության յենթարկելով:

5. Անհրաժեշտ դոնել դատախազի անմի-
ջական կամ նրա ղեկավարությամբ հառա-
կական մեղադրողների պարտադիր մասնակ-
ցությունը դատական ատյաններում, ոգոս-
տոսի 7-ի որենքով վորակված կորեորագույն
գործերի քննությանը:

6. Նկատի ունենալով ոգոստոսի 7-ի ո-
րենքով նախատեսված հանցագործություն-
ներով կադմակերպված յուրաքանչյուր սրո-
ցեսի հառարակական-քաղաքական նշանա-
կությունը, պարտավորացնել դատախազական
մարմիններին, այդ սրոցեսոսները անցկացնե-
լիս, յուրաքանչյուր անդամ ուշադրություն
դարձնել նրանց շուրջը հասարակական կոր-
ծիք ստեղծելու վրա և այդ կարծիքները ու-

տագործել սոցիալիստական իրավագիտակ-
ցությունը ամրացնելու համար:

7. Կալանավորումների կարգի և կալանքի
տակ պահելու որինականության մասին՝ մո-
խի 8-ի հրահանգի ճիշտ կիրառումն ապա-
հովելու ուղղությամբ, մակսիմալ չափով ու-
ժեղացնել դատախազական մարմինների աշ-
խատանքները, վորի համար անհրաժեշտ և,
վոր դատախազը ամիսը յերեք անգամից վոր
պակաս, պարտադիր կերպով այցելի ազատա-
զրկման բոլոր վայրերը և համապատասխան
միջոցներ ձեռք առնի ապորինի կալանքի տակ
դանվողների և դրանում մեղավոր անձանց
նկատմամբ:

Պտնել անհրաժեշտ, վոր դատախազի յու-
րաքանչյուր այցելությունը և տվյալ ազատա-
զրկման վայրի ռեժիմի ու հայտարարված թե-
րությունների մասին դատախազի գիտողու-
թյունները, ինչպես և այդ թերությունների
վերաբերյալ ձեռք առնված միջոցներն արձա-
նագրվեն հատուկ գրքում:

8. Քննության տակ դանվող և դատական
դատախազական մարմինների վրա հաշվող
կալանավորներին նորմաների (լիմիտների) տ-
վելի ճիշտ բաշխում կատարել:

9. Պարտավորեցնել դատախազներին՝ ա-
մենավճռական միջոցների դիմել՝ մոխի 8-ի
հրահանգը կյանքում անշեղորեն և ճշտու-

թյամբ կիրառելու, սոցիալիստական որինա-
կանության ամեն տեսակի խախտումների դեմ
խտադույն, հետեվողական և անշեղ պայքար
մղելու համար, սոցիալիստական որինակա-
նության խախտումների դեմ, պատասխանա-
տվության յենթարկելով խախտողներին, հա-
կապես տուգանքային քաղաքականության ա-
պարիզում տեղի ունեցող խեղաթյուրումների
համար:

Նախազգուշացնել դատախազներին, վոր
այդ պայքարում անբավարար վճռողականու-
թյուն, առավել ևս անգործություն ցուցաբ-
րելու համար, նրանք կենթարկվեն պատաս-
խանատվության, մինչև իսկ դատի կտրվեն:

10. Վորպես կանոն, ոգոստոսի 7-ի սանկ-
ցիայով գործերի քննությունները կենտրոնա-
ցնել բացառապես ժողքնինչների մոտ:

11. Նախազգուշացնել դատախազներին,
վոր նրանք անձամբ պատասխանատու յեն
նախնական կարանատներում՝ կալանավորնե-
րին պահելու համար նշանակված 3 որվա
ժամկետի խախտման համար, պարտավորե-
ցնելով նրանց ախտեր կազմել այն բոլոր դեպ-
քերում՝

ա) Յերբ ուղղիչ-աշխատանքային հիմ-
նարկները կալանատներից կալանավորներ չեն
քնդունում:

բ) Յերբ կալանատներում պահելու համար

սահմանված ժամկետը լրանալու պատճառա-
բանութեամբ միլիցիան ազատում է կաշանա-
վորներին կաշանատնից:

12. Պարտավորեցնել Հանրապետական,
Յերկրային և Մարզային բոլոր գաղաթան-
քի նախագահներին՝ բոլոր, չլսված վճարել
գործերը լիկվիդացիայի յենթարկել մեկ ամբ-
սվա ընթացքում, հետագայի համար սահմանե-
լով աշխատի կարգ, վոր վճարել առյան
մտնող բոլոր գործերը լսվեն ստացվելուց վոչ
ուշ, քան 20 օրվա ընթացքում:

13. Դատական-դատախազական աշխա-
տողները պետք է դիտենան, վոր մեր յերկրում
աթմ, սոցիալիստական շինարարութեան տըվ-
յալ ետադին համապատասխանող՝ իրավական
մթնոլորդ ստեղծելու և լայն աշխատավորա-
կան մասսաներին նոր սոցիալիստական իրա-
վադիտակցութեամբ դատախազակելու ուղղու-
թեամբ, նրանց վրա չափազանց խոշոր աշխա-
տանք և պատասխանատվութեան է դրվում:

ԴԱՏԱԿԱՆ-ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ
ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԸՆԿ. Ա. Ի. ՎԵՆԵՍԿՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹՎ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ

Դատական-դատախազական մարմինների
աշխատանքի վերակը բարելավելու նպատա-
կով՝ գտնել սնհրաժեշտ հետեյալ ձեռնար-
կումների կիրառումը:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ա. Կազմակերպչական բնագավառում

1) Վերացնել դատախազութեան դատա-
կան և ընդհանուր հսկողութեան աշխատանք-
ների մեջ յեղանձ ճեղքվածքը: Վերջ տալ հե-
տադոտութեանների, «արշավների», «ոեյդե-
րի» պրակտիկային և «չտարների», «յեռ-
յակների» և այլնի կազմակերպմանը, վորպես
դատախազական աշխատանքի միանձնյա իշ-
խանութեան սկզբունքին հակասող և իրեն
հանձնված գործերի համար դատախազի սնձ-
նական պատասխանատվութեանը թուլացնող
յերեվույթների:

2) Վերակառուցել դատախազութեան մար

մինների աշխատանքը նրա դատական գործունեությունը ուժեղացնելու խմատով, նկատի ունենալով, վոր դատախազային թշնամու վերջին մնացորդների և նրա ազենուտւրայի գեմ մղվող պայքարում, ինչպէս նաև աշխատավորության գիտակցության միջից կապիտալիզմի մնացորդները արմատախիլ անելու գործում, խորհրդային դատարանը հանդիսանում է խորհրդային պետության զորեղ լծակներէջ մեկը:

Այդ նպատակով՝

ա) Ինչպէս շրջանային, նույնպէս և յերկրային դատախազության գործունեության հիմքում դնել դատական աշխատանքը:

բ) Պարտավորեցնել շրջատախազներին, իսկ համապատասխան դեպքերում նաև յերկրային (մարզային) դատախազության աշխատողներին, մինչև իսկ յերկրային դատախազին և նրա ողնականներին, անձամբ մասնակցելու հասարակական նշանակություն ունեցող բոլոր պրոցեսներին:

գ) Քննությունների վորակի պատասխանատվությունը դնել շրջատախազներին, իսկ առանձին անհրաժեշտ դեպքերում՝ յերկրային (մարզային) դատախազների և նրանց ողնականների վրա, պարտավորեցնելով նրանց ուղեւորութիւն և իրական ղեկավարություն ցույց տալու ժողովներին կամ ավագ քննիչներին՝ քննության ամբողջ ընթացքում:

3. Դատախազներ նշանակելիս, վորպէս պարտադիր կանոն, ղեկավարվել հետևյալ պահանջներով՝

ա) Շրջատախազի պաշտոնում կարող են նշանակվել քննչական կամ դատական աշխատանքի ստաժ ունեցող անձինք: Հասարակական աշխատանքի ստաժ ունեցող, բայց քննչական աշխատանքին անձանոթ անձանց այդ պաշտոնում նշանակելու դեպքում, պարտաւորացնել նրանց, վորոշ ժամանակամիջոցում, յուրացնել քննչական գործի տեխնիկան, կամ անցնել քննչական տեխմինիսմումը, (ձեռք բերել քննչական ստաժ, քննել վորոշ քանակությամբ գործեր, կատարել քննչական մի շարք հանձնարարություններ և այլն):

բ) Յերկրային (մարզային) դատախազի պաշտոնում կարող են նշանակվել շրջատախազի ստաժ ունեցող անձինք (մի տարուց վոչ պակաս):

Յերկրային (մարզային) դատախազների ողնականների պաշտոնում կարող են նշանակվել անպայման յերեք տարուց վոչ պակաս շրջանային աշխատանքի ստաժ ունեցող անձինք:

գ) Հանրապետական դատախազություններում դատախազական պաշտոնում կարող են նշանակվել միայն յերկրային (մարզային) դատախազի, նրա տեղակալի, կամ ավագ ողնա-

կանի աշխատանքի ստաժ ունեցող անձիք (վաղ պակաս մի տարուց) :

4. Նկատել ունենալով նախաքննության վորակի բարձրացման վճռողական դերը, դատական աշխատանքի վրա, անհրաժեշտ է բարձրացնել դատախազի և ժողքնիչի պատասխանատվությունը՝ ինչպես նախաքննության նյութի, այնպես էլ ամբողջ քննության վորակի վերաբերմամբ, վորի կապակցությամբ գտնել անհրաժեշտ՝

ա) Վերջ տալ մինչև այժմ գոյություն ունեցող այն պրակտիկային, վորով ուսումնառվարտողների բաշխման ժամանակ, թույլերին և յերկրորդ հերթին ամբարտողներին քննչական աշխատանքների յեն ուղարկում :

բ) Պարբերաբար հրավիրել քննիչներին կոնֆերենցիաներ (դատախազների մասնակցությամբ), քննչական և դատախազական աշխատողներին ընդգրկել հեռակա ուսուցման դասընթացներում, մացնել քննչական վարժությունների պրակտիկա և այլն, և այդպիսի միջոցներով ապահովել քննիչների պատրաստման և վերավորակման սխառեմատիկ աշխատանքները :

Խնդրել՝ հանցադործությունների ուսումնասիրության ինտելիտուտի՝ քրեական պրոցեսի և քննության տեխնիկայի սեկցիայից, Մոսկվայի Մորհրդային Իրավունքի ինստիտուտի հեռակա ուսուցման կենտրոնական

գաստելթացքներից և Միութենական դատախազությունից՝ իրենց վրա վերցնելու այդ գործի ակադեմիական կողմի ղեկավարությունը համապատասխան մեթոդական ցուցմունքներ մշակելով և անմիջականորեն կամ դաշնակից հանրապետությունների դատախազությունների միջոցով տեղերին ուղարկելու համար :

գ) Հետ Միութենական դատախազության մշակած ցուցանիշների սահմանել քննիչների և դատախազների աշխատանքների հատուկ վորակական հաշվառում :

դ) Շրջանային և յերկրային (մարզային) դատախազությունների աշխատողների վորակավորումը բարձրացնելու համար պարտադիր համարել նրանց գործողումը կենտրոն՝ մեկից-յերեք ամիս ժամանակով :

5. Դատախազական ակտիվի (ոժանդակող խմբակներ, հասարակական մեղադրողներ և այլն) աշխատանքի սխառեմատիկ ղեկավարությունը դնել շրջանային դատախազի և յերկրային (մարզային) դատախազության համապատասխան աշխատողների վրա, պայմանով, վոր նրանք սխառեմատիկ ոգնություն ցույց տան ակտիվին, նրա ընդհանուր իդեոլոգիական, տեսական և տեխնիկա-իրավարանական մակարդակը բարձրացնելու համար :

6. Խնդրել դիրեկտիվ մարմիններին՝ դատախազական աշխատանքների հետ անմիջա-

պես կապ չունեցող խնդիրներով, դատախազության աշխատողներին տնտեսական քաղաքական կամ պանիաներում չողտադրած ռեզոլյուցիայով հատուկ ցուցումներ տալ տեղերին:

7. Դատախազության տեխնիկական ապարատի անհրաժեշտ վորակը ապահովելու նպատակով պարտադիր համարել աշխատողների վորակավորման ռեզոլյուցիայով սխտեմատիկ աշխատանք կատարել:

ա) քարտուղարների և տեխնիկական աշխատողների հատուկ դասընթացներ կազմակերպելու, բ) նրանց հեռակա ուսուցման ցանցում ընդգրկելու, գ) հատուկ կոնսուլտացիաներ, կոնֆերենցիաներ և այլն կազմակերպելու միջոցով:

8. Հաշվետվության դործում շրջադատախազների աշխատանքը պարզեցնելու նպատակով, վերադնել մինչև այժմ գոյություն ունեցող հաշվետվության ձևերը, սահմանելով միայն՝ ա) ամսական հաշվետվություն, ըստ Միութենական դատախազության մշակած սխեմայի և բ) տարեկան հաշվետվություն, իհարկե թույլ տալով նրանց դատախազական աշխատանքի առանձին ավելի կարևոր մոմենտներն արտացոլող հատուկ տեղեկագրություններ ևս ներկայացնելու:

բ. Դատավարության բնագավառում

9. Մեղադրյալի միջնորդությամբ նախա-

քննությունը հետապնդում նոր մատերյալներով լրացնելու նպատակով, քննությունը ավարտելուց հետո պարապրի համարել նախաքննության նյութերը մեղադրյալին առաջադրելու մասին՝ ՌՍՖՍՀ Գր. Դատ. Որ. 206 հոդ. և մյուս դաշնակից հանրապետությունների Գր. Դատ. Որ. համապատասխան (ՀՄՍՀ Գր. Դատ. Որ. 207 հոդ.) հոդվածների պահանջի կատարումը:

10. Քննության վորակի համար՝ դատախազության պատասխանատվությունը բարձրացնելու կարևորագույն միջոց հանդիսանում է, դատախազի կողմից, դատարանի մասնակցությամբ ստուգումը այն հանգամանքի, թե վորքանով է հիմնավորված մեղադրյալին պատասխանատվության կանչելու առաջարկությունը:

Ստուգման այդ ձևը հանդիսանում է տնտերինական նիստը, վորը վորոշ կատիգորիայի դործերով պետք է վերակադնել և մտցնել աշխատանքի սխտեմի մեջ վորպես դատական պրոցեսի նախապատրաստության անհրաժեշտ մասը:

Տնտերինական նիստը, մեղադրական յեղրակացությունը հաստատող դատախազի զեկուցմամբ՝ քննում է հետևյալ հարցերը՝

Մեղադրյալին դատի տալու համար դործի քննությամբ համարված նշանակների բավարար լինելու, հանցագործությունի վորակ-

ման ճիշտ լինելու, ինչպես իր նախաձեռնութեամբ, այնպես եւ մեղադրյալի միջնորդութեամբ լրացուցիչ վկաներ հրավիրելու կամ փաստաթղթեր պահանջելու: Վերջին դեպքում վորպես կանոն, մեղադրյալը պետք է հրավիրվի տնորինական նիստին:

Տնորինական նիստում պարտադիր է այն դատավորի մասնակցութիւնը, վորը դատական նիստում նախազահելու յե այդ գործին:

11. Առանձին կատեգորիայի գործերով, վորը սահմանվում է Միութենական դատախազութեան հատուկ հրահանգներով, դատախազութեան մասնակցութիւնը վճարեկ ատյաններում պարտադիր է:

12. Համաձայն ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 108 հոդ. և դաշնակից հանրապետութիւնների Քր. Դատ. Որ. համապատասխան հոդվածների, սահմանագծել քննութիւն կտարող մարմինների (քննչի, միլիցիայի, և ուրիշ.) իրաւասութիւնը, և անպայման քննչի իրաւասութեանը հանձնել պետական, պաշտոնական հանցագործութիւնները, ոգոստոսի 7-ի և դեկտեմբերի 8-ի որենքների սանկցիայով քննիող գործերը, նույնպես և յերկրային (մարզային) դատարաններին ընդդատյա բոլոր գործերը: Միլիցիայի մարմինների մասնակցութիւնն այդ գործերի քննութեանը սահմանափակվում է Քրեական Դատավարութեան որենադրջով սահմանված չըջանակներով:

13. Անհիմն քրեական գործեր հարուցելու պրակտիկան վերացնելու և այդ ուղղութեամբ հսկողութիւնը ուժեղացնելու նպատակով սահմանել, վոր գործեր կարող են հարուցվել և քննութիւն սկսվել միայն համապատասխան քննչական մարմնի պատճառաբանված վորջմամբ, վորպիսին պիտի հաստատված լինի հսկող դատախազի կողմից:

14. Վերականգնել քննչական մարմինների գործողութիւնների դեմ զանգատներ տալու փաստորեն չգործող կարգը, պահպանելով Քր. Դատ. Որ. սահմանված կանոնները, (147, 112, 220 հ.հ.):

15. Սահմանել գործերի քննութեան հետեւյալ ժամկետները՝

ա) կալանավորական գործերի համար մի ամսից վոչ ավելի, հաշված կալանավորման մոմենտից,

բ) հատուկ կատեգորիայի գործերի համար (առանձին աղյուսակով) 10 օրից վոչ ավելի:

Ժամկետի յերկարացումը թույլատրելի չէ դատախազի պատճառաբանված վորջմամբ, վորպիսին պետք է կցվի գործին:

2. ԴԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16. Գտնել նպատակահարմար յերկրային (մարզային) դատարանների, դաշնակից հանրապետութիւնների դերագոյն դատարաններ

րի և Միության գերագույն դատարանի դատական և դատական-վճարների կոնգրեսներում քրեական և քաղաքացիական գործերի համար առանձնացնելու հատուկ կազմեր:

17. Ապահովել դատական պրոցեսը վարելու և նրա ձեւակերպման անհրաժեշտ վորտ-կը, ուշադրութիւն դարձնելով՝

ա) դատաքննութեան բովանդակութեան և նրա վարելու կարգի վրա,

բ) դատաքննութեան արձանագրութեան ձեւակերպման վրա և հետեւել, վոր դատաքննութեան արձանագրութիւնը ներկայացվի դործին մասնակցողներին, նրանց կողմից դիտորդութիւններ մտցնելու համար:

18. Հատուկ ուշադրութիւն դարձնել դատավճռի բովանդակութեան վրա, հասնելով մաքսիմալ համառոտութեան, պարզութեան և միաժամանակ դարձնել այն լրիւ ու աղացուցող, վորի համար անհրաժեշտ է՝

ա) խուսափել դատավճռում ընդհանուր քաղաքական հարցերի վերաբերյալ վերացական դատողութիւններ մտցնելուց, նկատի ունենալով, վոր դատավճռի քաղաքական նշանակութիւնը ձեռք է բերվում դատաքննութեան նյութերի հիման վրա՝ լուծման յենթակա հարցերի քաղաքական ճիշտ գրվածքով,

բ) ապահովել ինչպէս այն յեղրակացութիւնների կոնկրետութիւնը և հիմնավորված լինելը, վորոնց հանդում է դատարանը՝

քննող գործերի բովանդակութիւնից, այնպէս եւ, գործով՝ դատարանի կողմից, մեղավոր ճանաչված ամեն մի անձի մեղադրանքի կոնկրետութիւնը և հիմնավորված լինելը,

գ) համապատասխան դեպքերում քաղաքական ձեւակերպումների կապակցել տվյալ դատական գործի կոնկրետ մատերյալի հետ,

դ) պարտադիր նախապայման ընդունել, վոր յուրաքանչյուր դատավճիռ լինի կազմված քաղաքականապէս, իրավարանորեն և տեխնիկապէս գրադետ կերպով:

յե) խորհրդակցական սենյակում, դատավճիռ հանելիս, հարցերը գնելու մասին՝ քրեական դատավարական որենսդրքի պահանջների ճշգրիտ կատարումը,

զ) գործի քննութեան ժամանակ վոչ միայն հատատել այս կապ այն անձանց մեղավորութիւնը, այլև հայտարարել այն տնտեսական և կազմակերպչական թերութիւններն ու անհարթութիւնները, վորոնք պայմաններ են ստեղծում հանցագործութեան համար, և այդ բոլոր անհարթութիւնների և թերութիւնների մասին հատուկ վորոշումներով՝ ահազանդել համապատասխան կուսակցական և խորհրդային մարմիններին, պարբերաբար ստուգելով ահազանդումների արդիւնքները:

19. Կայացրած վորոշումների համար վճարելի առյանի պատասխանատւութիւնը բարձրացնելու նպատակով, պարտադիր հա-

ժամբել ինչպես վճիռը բեկանելիս, նույնպես և վճռաբեկ գանդատները կամ բողոքները անհետևանք թողնելիս, պատճառաբանված վորոշումներ կայացնելը:

20. Անհանդուրժելի համարել բեկման գանդատների քննությանը այն դատավորների մասնակցությունը, վորոնք արդեն մասնակցել են այդ գործի քննությանը ինչպես առաջին, նույնպես և վճռաբեկ ատյանում:

21. Ստորագրաւ ատյանի վճիռը կամ դատավճիռը կրկնակի բեկանելու դեպքում, վրճաբեկ ատյանը պարտավոր է գործն ընդունել իր վարույթում ըստ եության քննելու համար, պահպանելով առաջին ատյանում այդ կարգի գործերի քննության համար սահմանված բոլոր կանոնները:

